

# Սուրբ Եօզէմարիա Էսքրիվա

## «Օպուս Դէյ»ի Հիմնադիր

## ԱՂՕԹՔ

*Ո՜վ Աստուած, որ Ամենասուրբ Մարիամի բարեխօսութեամբ անթիւ շնորհներ պարգեւեցիր Սուրբ Եօզէմարիա քահանային, ընտրելով նրան որպէս հաւատարմագոյն միջոց՝ հիմնելու համար «Օպուս Դէյ» շարժումը որպէս իւրաքանչիւրի մասնագիտական աշխատանքի եւ քրիստոնեայի ամէնօրեայ պարտականութիւնների կատարման միջոցով սրբացման ընթացք. այնպէս արա՝ որ ես նոյնպէս ընդունակ լինեմ իմ կեանքի բոլոր պահերն ու պարագաները վերածելու առիթների՝ սիրելու Քեզ եւ ուրախութեամբ ու պարզութեամբ ծառայելու Եկեղեցուն, Հռոմի Սրբազան Քահանայապետին եւ բոլոր հոգիներին, երկրի արահետները հաւատքի ու սիրոյ ջահով լուսաւորելով: Պարգեւիր ինձ, Սուրբ Եօզէմարիայի բարեխօսութեամբ, այս շնորհը՝ որ խնդրում եմ Քեզնից. ...* (ձեր սրտաբուխ խօսքերով խնդրեցէք): *Ամէն:*

*Հայր մեր, որ երկնքում ես, սուրբ թող լինի Քո Անունը. թող գայ Քո Արքայութիւնը. թող Քո կամքը կատարուի երկրի վրայ՝ ինչպէս երկնքում է: Մեր ամէնօրեայ հացը տուր մեզ այսօր: Եւ ներիր մեզ մեր մեղքերը, ինչպէս եւ մենք ենք ներում մեր դէմ մեղանչողներին: Եւ մի՛ տար մեզ փորձութեան, այլ փրկիր մեզ չարից. քանի որ Քոնն է Արքայութիւնը եւ զօրութիւնը եւ փառքը յաւիտեանս յաւիտենից. Ամէն:*

*Ողջոյն քեզ, շնորհներով լի Մարիամ, Տէրը քեզ հետ է: Օրհնեալ ես դու կանանց մէջ եւ օրհնեալ է որովայնիդ պտուղը՝ Յիսուս: Սրբուհի Մարիամ, Աստուածամայր, բարեխօսիր մեր՝ մեղաւորներիս համար, այժմ եւ մեր մահուան պահին: Ամէն:*

*Փառք Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

«Այնտեղ, ուր ձեր իղձերն են, ձեր աշխատանքը, այնտեղ՝ ուր տարածւում է ձեր սէրը, այնտե՛ղ է Քրիստոսի հետ ձեր ամէնօրեայ հանդիպման վայրը: Երկրի ամենանիւթական իրականութիւնների մէջ է, որ պէտք է սրբանանք, ծառայելով Աստծուն եւ բոլոր մարդկանց:

Երկինքն ու երկիրը, որդեակներս, թւում է՝ թէ միանում են այնտեղ ներքեւում, հորիզոնի գծի վրայ: Եւ սակայն ո՛չ, այլ ձեր սրտերում է, որ իսկապէս միաձուլւում են, երբ սրբութեամբ ապրում էք ամէնօրեայ կեանքը ... »:

Սբ. Եօզէմարիա Էսքրիվա,
«Սիրել աշխարհը մեծ կրքոտութեամբ» քարոզից, 08 Հոկտ. 1967

Սբ. Եօզէմարիա Էսքրիվան ծնուել է Բարբասթրոյ քաղաքում (Իսպանիա), 1902թ. Յունուարի 9ին: Քահանայական ձեռնադրութիւնը ստացել է Սարագոց-ցայում, 1925թ. Մարտի 28ին: 1928թ. Հոկտեմբերի 2ին, աստուածային ներշնչմամբ հիմնել է «Օպուս Դէյ» (Աստծոյ Գործը) շարժումը: 1975թ. Յունիսի 26ին, անակնկալ կերպով մահացել է Հռոմում, իր աշխատասենեակում գտնուող Աստւածամօր պատկերին անսահման գորովով մի վերջին հայեացք ուղղելուց յետոյ: «Օպուս Դէյ»ն այդ ժամանակ արդէն տարածուած էր հինգ մայրցամաքներով մէկ եւ հաշւում էր 80 ազգութիւնների պատկանող աւելի քան 60.000 անդամ, որոնք նուիրուած էին Եկեղեցու ծառայութեանը այն միեւնոյն հոգիով՝ որով միշտ ապրել էր Սբ. Եօզէմարիա Էսքրիվան. Սրբազան Քահանայապետի եւ Եպիսկոպոսների հետ կատարեալ միութեամբ: Սրբազան Քահանայապետ Յովհաննէս Պօղոս Երկրորդը «Օպուս Դէյ»ի Հիմնադրին սրբադասեց Հռոմում, 2002թ. Հոկտեմբերի 6ին: Սրբի յիշատակման ծիսական տօնը կատարւում է Յունիսի 26ին:

Սբ. Եօզէմարիա Էսքրիվայի մարմինը հանգչում է Հռոմի «Խաղաղութեան Տիրամայր» Առաջնորդական Եկեղեցում, «Բռունոյ Բուոցցի, 75» հասցէում:

Սբ. Եօզէմարիա Էսքրիվայի մասին արեւմտեան լեզուներով տեղեկութիւններ կարող էք գտնել համացանցային հետեւեալ կայքերում.

www.josemariaescriva.info - www.opusdei.org

Նրանց՝ ովքեր Աստծուց շնորհներ կը ստանան Սբ. Եօզէմարիա Էսքրիվայի բարեխօսութեամբ, խնդրում ենք դրա մասին տեղեկութիւն ուղարկել «Օպուս Դէյ»ի Առաջնորդարան: Հասցէն. «Prelature of Opus Dei - Office for the Causes of the Saints - Viale Bruno Buozzi, 75 - 00197 Roma - ITALY»:

Եկեղեցական իշխանութիւնների արտօնութեամբ